# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԳՄ-ՀԲՄԱՇՁԲ-2024/04

ք. Գավառ <<03>> 01 2024 թ.

<<ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը>>, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Քյավառ Սերվիս>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը,

գ) կատարողը երկու անգամ անընդմեջ թույլ է տալիս ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված խախտումները և դրանք չի վերացնում նույն աղյուսակում նշված ժամկետում:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը՝ յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման 42-րդ կետով սահմանված փաստաթղթերը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2024 թվականի համար կազմում է 36109200(երեսունվեց միլիոն մեկ հարյուր ինն հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը գործոնային է և կարող է փոփոխվել կախված սպասարկվող ճանապարհների երկարության, ճանապարհների վիճակի, ճանապարհների պահպանման մակարդակի փոփոխության հետ, բացի այդ յուրաքանչյուր տարի կողմերի համաձայնությամբ պայմանագրի արժեքի կարող է վերանայվել կախված նախորդ տարվա պաշտոնապես հրապարակված միջին գնաճից՝ տվյալ տարվա համար նախատեսված հատկացումների շրջանակներում:

4.1.1 Ճանապարհների և պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների միավորի (ճանապարհի մեկ կիլոմետրի՝ տարվա կտրվածքով աշխատանքների սահմանային արժեքներ) գները բերված է Պայմանագրի N 1.2 հավելվածում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված յուրաքանչյուր թերության վերացման համար սահմանված ժամկետի խախտման համար գանձվում է տուգանք նույն հավելվածի 4-րդ աղյուսակով սահմանված չափով և տույժ՝ թերության վերացման համար 3-րդ աղյուսակում սահմանված ժամկետի ուշացված յուրաքանչյուր օրվա համար՝ սպասարկվող ճանապարհահատվածի 1 կմ արժեքի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով, պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքի համար գանձվում է տուգանք տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքների առնվազն 70 տոկոսը կատարել անձամբ,պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով:

7.9 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.10 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.11 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.12 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1 N 1.2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

2024 և հաջորդող տարիներին աշխատանքներ կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900171078364
ՀՎՀՀ 08428824

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 41/5
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2500011209980100
ՀՎՀՀ 08420926

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
« 03 » 01 2024թ. կնքված
«ՀՀ ԳՄ-ՀԲՄԱՇՁԲ-2024/04» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| | 45231176/502 | Կցվում է (ընդհանուր պահանջներ) | դրամ | 36109200 | 36109200 | 1 | Համաձայն բնութագրի | 31.12.2028թ |

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

**Ընդհանուր պահանջներ**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներն կատարողն իրականացնում է ապահովելով ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները, ինչպես նաև սպասարկման աշխատանքների կատարման ոլորտին առնչվող այլ իրավական ակտերի, շինարարական նորմերի, ստանդարտների պահանաջները:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կատարողը պարտավոր է ապահովել ավտոմոբիլային ճանապարհների, ճանապարհային կահավորանքի պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ տրանսպորտի շուրջօրյա անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

Ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով կատարողը բնակավայրերից դուրս գտնվող հատվածներում իրականացնում է նաև գլխավոր ճանապարհի հետ հատվող երկրորդական ճանապարհների վրա՝ մինչև 50 մ երկարությամբ հատվածում տեղադրված ճանապարհային նշանների պահպանման աշխատանքները՝ երթևեկության անվտանգության պահանջներին համապատասխան:

***Ասֆալտբետոնե պատվածքով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման ընթացքում կատարողը պարտավոր է նաև՝***

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ
- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին: Եղանակային պայմանների կտրուկ փոփոխության դեպքում պարբերաբար տեղեկացնել ճանապարհների վիճակի մասին:

- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:

Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

***Ցեմենտբետոնե պատվածքով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝***

Ցեմենտբետոնե պատվածքի հնարավոր քայքայումը կանխելու նպատակով անհրաժեշտ է հնարավորինս նվազագույնի հասցնել աղի քանակը, ինչպես նաև աղի և ցեմենտբետոնե ծածկի շփման ժամանակահատվածը:

Ձյան շերտը պետք է մաքրել և հեռացնել, երբ ձյան շերտի հաստությունը ավելին է 3-4 սմ-ից:

Ձյունը պետք է մաքրել այնպիսի ձյունամաքրիչով, որը համալրված է ռետինե պաշտպանիչ շեղբով:

Աղավազային խառնուրդով մշակելուց հետո պետք է իրականացնել երթևեկելի մասի և կողնակների ձնամաքրում՝ կանխելով աղային ձյան լճացումը և ապահովելով աղաջրի լայնական ջրահեռացումը:

Մերկասառույցի մշակումը աղավազով պետք է իրականացնել ճանապարհի 1 քմ.-ին աղավազի խառնուրդում մինչև 25 գրամ աղ հաշվարկով: Ճանապարհի ծածկի ձյան շերտի առկայության ժամանակ անհրաժեշտ է օգտագործել աղավազային խառնուրդ, որտեղ աղի պարունակությունը կկազմի մինչև 5%:

***Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման ընթացքում կապալառու պարտավոր է նաև՝***

- Ճանապարհների պահպանության և երթևեկության անվտանգության պահանջների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝
  - Հողային պաստառ և օտարման շերտ
  - Երթևեկելի մաս
  - Արհեստական կառույցներ
  - Կահավորանք և անվտանգության էլեմենտներ, այդ թվում մետաղական արգելափակոցներ
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն: Ապահովել վնասված ճանապարհային կահավորանքի, այդ թվում մետաղական արգելափակոցների վերականգնումը:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կապալառուն պետք է ապահովի ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման 53-րդ կետի աղյուսակում նշված՝ ստորև թվարկված մեքենա-սարքավորումների քանակին, տեսակին, կահավորանքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև ապահովվի նշված մեքենա-սարքավորումների 70 տոկոսը սեփականության իրավունքով տնօրինելու պահանջը:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| --- | --- |
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ | «Քյավառ Սերվիս» ՍՊԸ |
| ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 41/5 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| հ/հ 900171078364 | հ/հ 2500011209980100 |
| ՀՎՀՀ 08428824 | ՀՎՀՀ 08420926 |
| ______________________ (ստորագրություն) | ______________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1.2
« 03 » 01 2024թ. կնքված
«ՀՀ ԳՄ-ՀԲՄԱՇՁԲ-2024/04» ծածկագրով պայմանագրի

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ (ՏԵՂԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ԳՆԵՐԸ

Ընթացիկ ամառային պահպանություն (գարուն-ամառ-աշուն)

| Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր) | Տարվա կտրվածքով (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|
| | Լավ պահպանման մակարդակի դեպքում՝1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Միջին պահպանման մակարդակի դեպքում՝1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) |
| Երաշխիքային ՏԵ | 399800 | X | X | X |
| Լավ ՏԼ | 877200 | 836534 | X | X |
| Բավարար ՏԲ | X | 1817500 | 1732500 | X |
| Վատ ՏՎ | X | X | X | 924030 |

Ընթացիկ ձմեռային պահպանություն (ձմեռ)

| Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր) | Տարվա կտրվածքով (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|
| | Լավ սպասարկման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Միջին սպասարկման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Բավարար սպասարկման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) |
| II-IV տեխնիկական կարգի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներ | 314800 | 302600 | 290940 |

Մետաղական արգելափակոցների

| Տարածաշրջանի անվանումը | 1000 գծամետր մետաղական արգելափակոցների պահպանման արժեքը (ՀՀ դրամ) |
|---|---|
| Գավառի տարածաշրջան | 1365000 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900171078364
ՀՎՀՀ 08428824

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 41/5
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2500011209980100
ՀՎՀՀ 08420926

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 03 » 01 2024թ. կնքված
«ՀՀ ԳՄ-ՀԲՄԱՇՁԲ-2024/04» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 45231176/502 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900171078364
ՀՎՀՀ 08428824

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 41/5
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
հ/հ 2500011209980100
ՀՎՀՀ 08420926

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« 03 » 01 2024թ. կնքված
«ՀՀ ԳՄ-ՀԲՄԱՇՁԲ-2024/04» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ __________________________
հվհհ ________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ________________
հհ____________________________
հվհհ__________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 03 » 01 2024թ. կնքված
«ՀՀ ԳՄ-ՀԲՄԱՇՁԲ-2024/04» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Հավելված 1.1

<<03>> 01 2024թ. կնքված

N ՀՀ ԳՄ-ՀԲՄԱՇՁԲ-2024/04 պայմանագրի

Գավառի տարածաշրջան

2024թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհներ

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազար դրամ/ | Ընդամենը /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ** | | | | | | | |
| /Հ-39/(Գավառ)-Նորատուս-Սևանա լիճ կմ1+400-կմ4+500 | Տեղական II-IV | 3,1 | | բավարար | 3,1 | 290,940 | 901,914 |
| /Հ-39/(Կարմիրգյուղ)-Սարուխան(S-4-13) կմ0+00-կմ6+900 | Տեղական II-IV | 6,9 | | բավարար | 6,9 | 290,940 | 2007,486 |
| /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Լանջաղբյուր-Գեղարքունիք կմ0+600-կմ12+900 | Տեղական II-IV | 12,3 | | բավարար | 12,3 | 290,940 | 3578,562 |
| Գավառ(S-4-13)-Ծաղկաշեն կմ0+00-կմ6+400 | Տեղական II-IV | 6,4 | | բավարար | 6,4 | 290,940 | 1862,016 |
| Հ-39(Գավառ)-Նորատուս(S-4-11) կմ0+00-կմ5+400 | Տեղական II-IV | 5,4 | | բավարար | 5,4 | 290,940 | 1571,076 |
| /Մ-10/-Արծվաքար քաղամաս-/S-4-17/ կմ0+00-կմ2+500 | Տեղական II-IV | 2,5 | | բավարար | 2,5 | 290,940 | 727,350 |
| /Մ-10/(Ծովազարդ)-Լճափ-Հայրավանք- /Հ-39/ (Մ10-Ծովազարդ հատված) կմ0+00-կմ3+00 | Տեղական II-IV | 3,0 | | բավարար | 3,0 | 290,940 | 872,820 |
| /Մ-10/-Լճափ(S-4-19) կմ0+00-կմ0+900 | Տեղական II-IV | 0,9 | | բավարար | 0,9 | 290,940 | 261,846 |
| **Ընդամենը** | | **40,5** | | | **40,5** | | **11783,070** |

| Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| /Հ-39/(Գավառ)-Նորատուս-Սևանա լիճ կմ1+400-կմ4+500 | Տեղական II-IV | 3,1 | ՏԼ | միջին | 3,1 | 836,534 | 2593,255 |
| /Հ-39/(Կարմիրգյուղ)-Սարուխան(Տ-4-13) կմ0+00-կմ6+900 | Տեղական II-IV | 6,9 | ՏԼ | միջին | 6,9 | 836,534 | 5772,085 |
| Գավառ(Տ-4-13)-Ծաղկաշեն կմ0+00-կմ6+400 | Տեղական II-IV | 6,4 | ՏԼ | միջին | 6,4 | 836,534 | 5353,818 |
| Հ-39(Գավառ)-Նորատուս(Տ-4-11) կմ0+00-կմ5+400 | Տեղական II-IV | 5,4 | ՏԼ | միջին | 5,4 | 836,534 | 4517,284 |
| /Մ-10/-Արծվաքար քաղամաս-/Տ-4-17/ կմ0+00-կմ2+500 | Տեղական II-IV | 2,5 | ՏԼ | միջին | 2,5 | 836,534 | 2091,335 |
| /Մ-10/(Ծովազարդ)-Լճափ-Հայրավանք- /Հ-39/ (Մ10-Ծովազարդ հատված) կմ0+00-կմ3+00 | Տեղական II-IV | 2,0 | ՏԼ | միջին | 2,0 | 836,534 | 1673,068 |
| | Տեղական II-IV | 1,0 | ՏՎ | թույլատրելի | 1,0 | 924,030 | 924,030 |
| /Մ-10/-Լճափ(Տ-4-19) կմ0+00-կմ0+900 | Տեղական II-IV | 0,9 | ՏԼ | միջին | 0,9 | 836,534 | 752,881 |
| **Ընդամենը** | | **28,2** | | | **28,2** | | **23677,755** |

**Մետաղական արգելափակոցներ**

| Աշխատանքի անվանումը | Ընդհանուր երկարությունը /1000գծմ/ | Միավորի գինը /հազար դրամ/ | Ընդամենը /հազար դրամ/ |
|---|---|---|---|
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների մետաղական արգելափակոցների պահպանում | 0,475 | 1365,0 | **648,375** |
| **Ամբողջը Գավառի տարածաշրջան (ձմեռ, գարուն-ամառ-աշուն և մետաղական արգելափակոցներ)** | | | **36109,200** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900171078364
ՀՎՀՀ 08428824

---------------------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Քյավառ Սերվիս>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 41/5
<<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2500011209980100
ՀՎՀՀ 0820926

---------------------------------------
/ստորագրություն/

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀ ԳՄ ՀԲՄԱՇՁԲ-2024/04-1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ/ՏԵՂԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

ք. Գավառ <<18>> 01 2024թ.

<<ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը>> ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Քյավառ Սերվիս>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2024 թվականի հունվարի 03-ին կնքված N ՀՀ ԳՄ ՀԲՄԱՇՁԲ-2024/04 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. ***Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը***

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն համաձայնագրի N1.1 հավելվածով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2024 թվականի հունվարի 3-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. ***Համաձայնագրի գինը և վճարման կարգը***

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2024 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 36109200 (երեսունվեց միլիոն մեկ հարյուր ինն հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1, N 1.1 և N 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ | «Քյավառ Սերվիս» ՍՊԸ |
| ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 | ք.Գավառ, Ազատության 41/5 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900171078364 | h/h 2500011209980100 |
| ՀՎՀՀ 08428824 | ՀՎՀՀ 08420926 |
| ______________________ (ստորագրություն) | ______________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 2
<<18>> 01 2024թ. կնքված
ՀՀ ԳՄ ՀԲՄԱՇՁԲ-2024/04-1 ծածկագրով համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| h/h | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 45231176/1 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանա պարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում | 9214400 | 9214400 | 19636600 | 19636600 | 19636600 | 27563500 | 27563500 | 27563500 | 36109200 | 36109200 | 36109200 | 36109200 | **36109200** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900171078364
ՀՎՀՀ 08428824

_______________________
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ք.Գավառ, Ազատության 41/5
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2500011209980100
ՀՎՀՀ 08420926

_______________________
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1
<<18>> 01 2024թ. կնքված
ՀՀ ԳՄ ՀԲՄԱՇՁԲ-2024/04-1 ծածկագրով համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 45231176/1 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում | դրամ | 36109200 | 36109200 | 1 | Հավելված N1.1-ում նշված ճանապարհահատվածներում | 31.12.2024թ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 հ/հ 900171078364
ՀՎՀՀ 08428824

------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ք.Գավառ, Ազատության 41/5
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2500011209980100
ՀՎՀՀ 08420926

------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1.1

<<18>> 01 2024թ. կնքված

N ՀՀ ԳՄ-ՀԲՄԱՇՁԲ-2024/04-1 համաձայնագրի

**Գավառի տարածաշրջան**

**2024 թվականին սպասարկման ենթակա մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհներ**

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազար դրամ/ | Ընդամենը /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ** | | | | | | | |
| /Հ-39/(Գավառ)-Նորատուս-Սևանա լիճ կմ1+400-կմ4+500 | Տեղական II-IV | 3,1 | | բավարար | 3,1 | 290,940 | 901,914 |
| /Հ-39/(Կարմիրգյուղ)-Սարուխան(Տ-4-13) կմ0+00-կմ6+900 | Տեղական II-IV | 6,9 | | բավարար | 6,9 | 290,940 | 2007,486 |
| /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Լանջաղբյուր-Գեղարքունիք կմ0+600-կմ12+900 | Տեղական II-IV | 12,3 | | բավարար | 12,3 | 290,940 | 3578,562 |
| Գավառ(Տ-4-13)-Ծաղկաշեն կմ0+00-կմ6+400 | Տեղական II-IV | 6,4 | | բավարար | 6,4 | 290,940 | 1862,016 |
| Հ-39(Գավառ)-Նորատուս(Տ-4-11) կմ0+00-կմ5+400 | Տեղական II-IV | 5,4 | | բավարար | 5,4 | 290,940 | 1571,076 |
| /Մ-10/-Արծվաքար քաղամաս-/Տ-4-17/ կմ0+00-կմ2+500 | Տեղական II-IV | 2,5 | | բավարար | 2,5 | 290,940 | 727,350 |
| /Մ-10/(Ծովազարդ)-Լճափ-Հայրավանք- /Հ-39/ (Մ10-Ծովազարդ հատված) կմ0+00-կմ3+00 | Տեղական II-IV | 3,0 | | բավարար | 3,0 | 290,940 | 872,820 |
| /Մ-10/-Լճափ(Տ-4-19) կմ0+00-կմ0+900 | Տեղական II-IV | 0,9 | | բավարար | 0,9 | 290,940 | 261,846 |
| **Ընդամենը** | | **40,5** | | | **40,5** | | **11783,070** |

| Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| /Հ-39/(Գավառ)-Նորատուս-Սևանա լիճ կմ1+400-կմ4+500 | Տեղական II-IV | 3,1 | ՏԼ | միջին | 3,1 | 836,534 | 2593,255 |
| /Հ-39/(Կարմիրգյուղ)-Սարուխան(Տ-4-13) կմ0+00-կմ6+900 | Տեղական II-IV | 6,9 | ՏԼ | միջին | 6,9 | 836,534 | 5772,085 |
| Գավառ(Տ-4-13)-Ծաղկաշեն կմ0+00-կմ6+400 | Տեղական II-IV | 6,4 | ՏԼ | միջին | 6,4 | 836,534 | 5353,818 |
| Հ-39(Գավառ)-Նորատուս(Տ-4-11) կմ0+00-կմ5+400 | Տեղական II-IV | 5,4 | ՏԼ | միջին | 5,4 | 836,534 | 4517,284 |
| /Մ-10/-Արծվաքար քաղամաս-/Տ-4-17/ կմ0+00-կմ2+500 | Տեղական II-IV | 2,5 | ՏԼ | միջին | 2,5 | 836,534 | 2091,335 |
| /Մ-10/(Ծովազարդ)-Լճափ-Հայրավանք- /Հ-39/ (Մ10-Ծովազարդ հատված) | Տեղական II-IV | 2,0 | ՏԼ | միջին | 2,0 | 836,534 | 1673,068 |
| | Տեղական II-IV | 1,0 | ՏԿ | թույլատրելի | 1,0 | 924,030 | 924,030 |
| /Մ-10/-Լճափ(Տ-4-19) կմ0+00-կմ0+900 | Տեղական II-IV | 0,9 | ՏԼ | միջին | 0,9 | 836,534 | 752,881 |
| **Ընդամենը** | | **28,2** | | | **28,2** | | **23677,755** |

| Մետաղական արգելափակոցներ | | | |
|---|---|---|---|
| Աշխատանքի անվանումը | Ընդհանուր երկարությունը /1000գծմ/ | Միավորի գինը /հազար դրամ/ | Ընդամենը /հազար դրամ/ |
| ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային (տեղական) | 0,475 | 1365,0 | **648,375** |
| **Ամբողջը Գավառի տարածաշրջան (ձմեռ, գարուն-ամառ-աշուն և մետաղական արգելափակոցներ)** | | | **36109,200** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900171078364
ՀՎՀՀ 08428824

______________________
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Քյավառ Սերվիս>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 41/5
<<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2500011209980100
ՀՎՀՀ 08420926

______________________
/ստորագրություն/

Կ.Տ.